ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(9)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(9)

ԵՐԵՎԱՆ 2022

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
Հարություն Մարության, *պ. գ. դ.*
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*
Հռիփսիմե Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*
Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*
Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*
Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*
Համո Սուքիասյան, *պ. գ. թ., դոցենտ*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*)
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*)
Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ Բրիտանիա*)

ISSN 1829-0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արփակ Ասապրյան

ԿԱՐԻՆՈՒՄ 1785 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ №3579 ՄԻՆԻՆ 8

Լիլիա Ավանեսյան

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՔՆԱԴԱՐՅԱՆ ԱՆԿՎԱԾԻ ԵՎ ԳՈՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԸՍՏ ՀՊԹ ՆՅՈՒԹԵՐԻ) 21

Հրազդան Թոքմաջյան

ՄԱԼԱԹԻԱՅԻ ՀՅՈՒՍՎԱԾ ԿԱՐ 38

Հասմիկ Պետրոսյան

ԳՈՒԳԱՐՔԻ ՏՆԱՅՆԱԳՈՐԾ ԲՈՒՍԱՆԱԽՇ ԳՈՐԳԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԸՍՏ ՀՊԹ, ՀԱԹ, ԼՓԵԹ, ԵՔՊԹ ՆՅՈՒԹԵՐԻ) 46

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ասպղիկ Իսրայելյան

ԱՉՔԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ 56

Արևիկ Մելիքյան

ՊԱՏՈՒՄՆԵՐ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ 82

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նելլի Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԲԱՑԻԿ-ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ 94

Արմինե Շահբազյան

«ԴԱՎԻԹ ԲԵԿ» ԿԵՐՊԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՅՆԱՑՈՒՄԸ 103

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայկ Նազարյան

1826 – 1828 ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՄՆԱԿՑԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱԿԱԶՄԸ, ԹՎԱԿԱԶՄԸ, ՀԱՄԱԶԳԵՍՏԸ, ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇՆԵՐԸ 114

Վանիկ Վիրաբյան

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 1919 Թ. ԶՈՂ-ԲԱՍԱՐԳԵՉԱՐՅԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԳՆԴԱՊԵՏ ՔԼԱՅՎ ԹԵՄՊԵՐԼԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 124

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Լիլիա Ավանեսյան

ՆԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ 149

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 153

ՆԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

2022 թ. հունվարի 1-ին լրացավ վաստակաշատ գիտնական, ազգագրագետ Հայաստանի պատմության թանգարանի Ազգագրության բաժնի գիտաշխատող երջանկահիշատակ Նազիկ Քրիստափորի Ավագյանի 100-ամյակը: Նազիկ Ավագյանը ծնվել է Գողթն գավառի Ցղնա գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Ցղնայում: Հետագայում սովորել է Երևանում և ավարտել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, եղել է նշանավոր ազգագրագետ Ստեփան Լիսիցյանի ուսանողը:

Նազիկ Ավագյանը 1948 թ. ապրիլի 16-ին (Հրաման № 36) ընդունվել է Հայաստանի պատմության թանգարան, սկզբում որպես բացատրող, հետագայում Ազգագրության բաժնի կրտսեր գիտաշխատող: Անմիջապես ընդգրկվելով բաժնի մեծածավալ աշխատանքների մեջ, Ն. Ավագյանը դարձավ թանգարանի նվիրյալներից մեկը: Նա իր ամբողջ կյանքը նվիրեց Ազգագրության բաժնի գիտա-հետազոտական ու գիտա-ուսումնական աշխատանքներին, բաժնի վեց ֆոնդերի համալրմանը, ցուցահանդեսների կազմակերպմանը, հոդվածների և գրքերի հրատարակմանը, հրապարակային գործունեությանը: 1979–1988 թթ. նա եղել է Ազգագրության բաժնի վարիչը: Նրա ղեկավարությամբ շատ արդյունավետ էին ընթանում բաժնի աշխատանքները՝ այդ թվում ազգագրական գիտարշավները՝ Ախալցխայի Ծուղրուտ, Մեծ Պամաճ, Ծղալթբիլայի Սազել գյուղեր (1960), Ալավերդու Օձուն, Դանուշավան, Արդվի, Ղաչաղան գյուղեր (1961), Նոյեմբերյանի Կողբ, Ղալաչա, Այրում գյուղեր (1961), Աշտարակի Փարպի, Կարբի, Օշական և Էջմիածնի Ապագա, Արշալույս, Սամաղար գյուղեր (1964), Երևանի Շահումյանի շրջանում բնակվող սվեդահայերի մոտ (1965), Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի, Շուշիի շրջանների Հարավ, Գիշի, Տումի, Ճարտար, Տող, Մեծ Թաղեր և այլ գյուղեր (1966), Երևանաբնակ սեբաստահայերի մոտ (1966), Սևանի ավազանի Մարտունու, Վարդենիսի, Սևանի, Կամոյի շրջաններ, Վարդենիկ, Կարճաղբյուր, Սարուխան, Բատիկյան, Կարմիր, Հացաշատ և այլ գյուղեր (1969), Ախալքալակի, Բոգդանովկայի, Ախալցխայի շրջաններ, Լենինական և մոտակա գյուղեր (1970), Ապարանի և Արագածի շրջանների Ափնա, Մուլքի, Հարթավան, Զքնաղ, Մելիք, Ծաղկահովիտ, Բուժական, Հայփամբ, Արայի գյուղեր (1971), Ստեփանավանի շրջանի Վարդաբլուր, Կուրթան, Գյարգյառ գյուղեր, Թումանյանի շրջանի Դսեղ, Մարց գյուղեր (1972), Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Արտաշատի և Լենինականի շրջաններ (1973), Թալինի շրջանի Կաթնաղբյուր, Վերին և Ներքին Բազմաբերդ, Աշնակ, Սասունիկ և Ավթոնա գյուղեր (1976), Արթիկի Լեռնակերտ, Պեմզաշեն, Գեղանիստ, Գետափ, Փանիկ, Մեծ Մանթաշ, Հոռոմ գյուղեր, Ախուրյանի Կամո, Ձաջուռ, Կառնուտ, Մայիսյան հայրենյաց գյուղեր (1977), Ախալքալաքի Էխթիլա, Խուլ-

գումո, Ձաք գյուղեր, Բոգդանովկայի, Ախալցխայի շրջաններ (1978),Ղուկասյանի Սիզավետ, Մեծ Սեպասար, Սարագյուղ, Բավրա, Ղազանչի գյուղեր (1980), Էջմիածնի շրջանի Ծաղկունք, Հովտամեջ, Լեռնամերձ, Ֆրանկանոց, Դողս գյուղեր (1986):

Հանրապետական ու միջազգային գիտական նստաշրջաններում ներկայացրած շուրջ քառասուն զեկուցումներում Ն.Ավագյանը հնչեցրել է Պատմական Հայաստանի ազգագրական տարբեր շրջանների (Բարձր Հայք, Սեբաստիա, Աղձնիք և Տուրուբերան, Վասպուրական, Նախիջևան, Սյունիք-Արցախ, Երևան և այլն) ավանդական հագուստի և կիրառական արվեստի ուսումնասիրմանը վերաբերող հիմնահարցերն ու հիմնախնդիրները:

1974–1988 թթ. Ն.Ավագյանը կազմել է Հայաստանի պատմության թանգարանի մշտական և ժամանակավոր բազմաթիվ ցուցահանդեսների, Սպիտակի (1984), Հրազդանի (1984), Լենինականի պատմաերկրագիտական թանգարանների (1985), էքսպոզիցիոն պլանները, Հայաստանի տարբեր մշակութային կենտրոններում շրջիկ ցուցահանդեսների շուրջ քսան էքսպոզիցիոն պլան, ինչպես նաև Ազգագրության բաժնի կողմից Լենինգրադում, Տարտուում, Կիևում կազմակերպված ցուցահանդեսների էքսպոզիցիոն պլանները:

Նազիկ Ավագյանի հրատարակած ուսումնասիրությունների ցանկում կա հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզվով երեսունչորս աշխատություն: Այդ աշխատություններից են՝ Этнографические фонды Государственного исторического музея Армении, Москва 1964, (на русском, на французском языках); Սուեդահայերի մշակույթի և կենցաղի նմուշների հավաքածուն, Լրաբեր հասարակագիտության, Երևան 1967, №7, էջ 87–95; Սեբաստիայի և շրջակա գյուղերի ժողովրդական տարազը 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբին, ՊԲՀ Երևան 1970, №2, էջ 224–232; Բարձր Հայքի ժողովրդական տարազը 19-րդ. և 20-րդ դ. սկզբին, ՊԲՀ, Երևան 1970, №4 , էջ 183–196; Народная одежда армян Арцаха в 19 – нач. 20 века, Хозяйство и материальная культура народов Кавказа в 19–20 веках, вып. I, Москва, 1971, стр. 209–223; Գողթն գավառի տարազը 19-րդ և 20-րդ դարի սկզբին, Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի, հ.6, Երևան 1975, էջ 93–113 և այլն:

Նազիկ Ավագյանի թողած գիտական ժառանգության կարևորագույն մասը կազմում են ութ անտիպ աշխատությունները՝

- Ազգագրական ֆոնդի կավանոթների կատալոգ (6 մամուլ)
- Հայկական գուլպաների ու սոնապանների կատալոգ (6 մամուլ)
- Հայկական գոգնոցների կատալոգ (5 մամուլ)
- Գլխի հարդարանքի կատալոգ (8 մամուլ)
- Հայկական գոտիների կատալոգ (5 մամուլ)
- Հայկական զգեստների կատալոգ (10 մամուլ)
- «Հայկական տարազը 19-րդ և 20-րդ դդ.» սկզբին ռուսերեն լեզվով աշխատությունը (12 մամուլ)
- «Գողթն գավառի ազգագրությունը» մենագրությունը (10 մամուլ):

Հիշելով Նազիկ Ավագյանին նշենք, որ նա, անկասկած, Գողթնի ազգագրության լավագույն գիտակներից էր և այն եզակի անձանցից, որոնք կատարելապես տիրապետում էին և կենդանի հնչեցնում Գողթնի բացառիկ բարբառը՝ «զոկերենը»:

Շարունակելով ուսուցիչների գործը (այդպես էր նա անվանում մեծ ազգագրագետներ Երվանդ Լալայանին և Ստեփան Լիսիցյանին), Նազիկ Ավագյանը զբաղվեց հայ ժողովրդական նյութական մշակույթի արժեքներից մեկի՝ ավանդական հագուստի հարցերով. հրատարակեց բազմաթիվ գիտական հոդվածներ և արժեքավոր «Հայկական ժողովրդական տարազը. XIX դ. – XX դ. սկիզբ» գիրքը (1983), որն ուղղակի թեմայի ամբողջական ուսումնասիրության արդյունքն է: Աշխատությունը սպառիչ պատասխաններ է տալիս թեմայի հետ կապված բազմաթիվ հարցերի և հայկական ավանդական հագուստը ուսումնասիրողների համար դասագիրք է: Համակարգված գիտական բաժանումը ըստ գլուխների, հնարավոր է դարձնում ծանոթանալու հայկական գործվածքներին և նրանց զարդարվեստին, կանանց և տղամարդկանց հագուստին, գլխի հարդարանքին, գուլպաներին և ոտնամաններին, ինչպես նաև լրացուցիչ զարդերին: Իր ծննդավայրում՝ Ցղնայում անցկացրած մանկությունը մեծ հետք է թողել ազգագրագետ Նազիկ Ավագյանի ստեղծագործական կյանքում: Մետաքսյա թելեր արտադրող Քրիստափոր Ավագյանի (որի պատճառով էլ ենթարկվել է ստալինյան ռեպրեսիաների և ձերբակալվել) դուստրը մանկուց սովորել էր կարուձև: Երիտասարդ տարիքում, դառնալով հմուտ դերձակ, նա կարողանում էր, արտադրական որակով կարել ոչ միայն կանանց, տղամարդկանց, երեխաների շապիկ ու զգեստ, այլ նույնիսկ՝ վերարկու: «Հայկական ժողովրդական տարազը. XIX դ. – XX դ. սկիզբ» գրքում տրված հագուստի ձևվածքի մանրամասնությունները հենվում են գործնական գիտելիքների վրա, որոնք էլ ավելի արժեքավոր և վստահելի են դարձնում հայկական ավանդական հագուստի մասին հաղորդած տվյալները: Գրքի մեջ ներկայացված են կանանց և տղամարդկանց հագուստների տեսակների ձևվածքների, հագուստը հարդարող զարդապատկերների և գործիքների գծապատկերները, ինչպես նաև վաթսունվեց լուսանկար:

Հանրային մամուլում լույս տեսած հոդվածները և հաղորդումները քառասուներեքն են: Բազմաթիվ են 1973 – 1988 թթ. Նազիկ Ավագյանի կողմից հեռուստացույցով տրված հաղորդումները: Դրանցից են՝ Հայկական տարազը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին (1973); Հայկական գոտիները 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին (1973), Սյունիք-Արցախի ժողովրդական տարազը (1976); Գլխազարդերը հայկական ժողովրդական տարազում (1976); Հայկական գուլպաներն ու սոնապանները (1977); Բարձր Հայքի կանանց տարազը (1981); Հայկական տարազի ասեղնագործական արվեստը (1983); Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտում կազմակերպված ժողովրդական երգիպարի փառատոնի առիթով խմբերի տարազի մասին (1988):

Հայկական Սովետական Հանրագիտարանի համար կազմվել են հետևյալ հոդվածները՝ հատոր 1. Ալանի, Ածիկ, Աղանձ, Ապուխտ, Աղցան, Այծենակաճ, Այգեկութ, Աղուհաց, Անթրոպոգենեզ; հատոր 2. Բոժոժամանում, Բաճկոն, Բրդիմանում; հատոր 3. Գլխարկ, Գոտի, Գուլպա, Դերձակություն, Դիպակ; հատոր 4. Իլիկ; հատոր 5. Խնոցի, Խուրջին, Կապա, Կոշիկ; հատոր 6. Ձեռագործ; հատոր 7. Ճակտնոց, Ճախարակ, Ճարմանդ, Մասնատուփ, Մանրարուրք, Շերեփ, Շալ; հատոր 8. Ոսկերչություն; հատոր 9. Չուխա; հատոր 10. Սևադ, Սկիհ, Սկուտեղ, Սկահակ; հատոր 12. Տրեխ, Ցանցկեն:

Լինելով հայ ավանդական հագուստի մասնագետ, Նազիկ Ավագյանը, որպես խորհրդատու, օգնել է 1980-ական թթ. ստեղծված մի շարք ազգագրական համույթներին (օրինակ՝ «Մարաթուկ» խմբին)՝ ճիշտ կրելու ավանդական հագուստը:

Անգնահատելի մեծ են Նազիկ Ավագյանի Հայաստանի պատմության պետական թանգարանին մատուցած ծառայությունները: 1990-ական թթ. նրա ջանքերով և անձնական և բարեկամական կապերի շնորհիվ Հայաստանի պատմության թանգարան մուտք գործեցին նշանավոր ազգագրագետներ Երվանդ Լալայանի և Վարդ Բդոյանի անձնական արխիվները, որոնց գիտական մշակումն ու ցուցակագրումը կատարեց ինքը՝ Նազիկ Ավագյանը:

Պահպանվել են այն անմոռանալի դրվագները, երբ նա սիրով աշխատում էր ՀՊԹ-ում պրակտիկա անցնող ուսանողների և Ազգագրության բաժինը համալրած երիտասարդ կադրերի հետ, ձգտելով իր հարուստ գիտելիքներն ու աշխատանքային փորձը փոխանցել երիտասարդ սերնդին: Սերտ կապեր ուներ ԵՊՀ պատմության ֆակուլտետի ազգագրության ամբիոնի դասախոսական կազմի հետ: Նազիկ Ավագյանի ազգանվեր գործերից էր թանգարանի ղեկավարությանը 1996թ., «Ազգագրական Հանդէսի» 100-ամյակի կապակցությամբ, Եր. Լալայանի գերեզման այցելելու առաջարկը: Ցավոք, առաջարկին միացան միայն Ազգագրության բաժնի գիտաշխատողներ՝ Ա.Իսրայելյանը և Լ.Ավանեսյանը, որոնց հաջորդ այցելությունը Եր.Լալայանի գերեզմանին և հարգանքի ու հիշատակի տուրքը տալը մեծ գիտնականին տեղի ունեցավ 2006թ.: Նազիկ Ավագյանի նախաձեռնության շնորհիվ այսօր Կոմիտասի անվան պանթեոնում հայ ազգագրագետ, բանահավաք, հնագետ Եր.Լալայանի գերեզման այցելելը ավանդույթի ուժ է ստացել:

Ավարտելով մեր խոսքը, նշենք, որ Նախիջևանի Օրդուբադի շրջանի (հնում՝ Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի Գողթն գավառ), Ցղնա գյուղից էին Սողոմոն Սողոմոնյանի՝ մեծն Կոմիտասի ծնողները, ՀՀ ժողդերասան, կոմպոզիտոր Արամ Մերանգուլյանը (1902–1967), հայտնի տնտեսագետ, դոկտոր-պրոֆեսոր Մենտոր Բունիաթյանը (1888–1969), դրամատուրգ Անուշավան Վարդանյանը, գրական, հասարակական գործիչ Լևոն Սարգսյանը (1862–1927), Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության հիմնադիրներից մեկը՝ Ստեփան Զորյանը՝ Ռոստոմը (1867–1919) և նրա եղբայրներ՝ Արիստակես և Զորի Զորյանները: Այսօր այս աստղաբույլի կողքին իր արժանի տեղն ունի ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու, Հայաստանի պատմության թանգարանի կենսագրության մեջ անջնջելի հետք թողած Նազիկ Քրիստափորի Ավագյանը (1922–2007):

Լիլիա Ավանեսյան